

Հընչեսցի փոյթ աւագափող՝ տացի նըշան մարտացու ,
Յառաջեցեն զրօշակաւորք կարապետել յարեան չու :
Հապա , յառաջ...

Զօրականք (Երգեկն ի քայլ) :

Ի կոիւ մահաշունչ արիք , Հայկազունք ,
Ծեծել սուսերաւ Սասանայ ըզկրունկն ,
Անհաշտ մեր թըշնամեզն .
Ոյր զօրք ահիւ տացեն փախուստ ,
Ընդ ճեպ քաջացն կասեալ յետուստ ,
Անկցին դիտապաստ , յարեան թաղթաղուն :
Ի զէն ամրապինդ ելցուք ի ճակատ՝
Խաղալ ձիընթաց յամբոիլ ապիրատ
Կործաննել յանդիման .
Չօնի առատ մեզ ի բարձանց
Աղիկամի աստ քաջարանց
Դիմելոց ի մահ , պըսակ յաղթական : (Չգի վարագոյրն) :

Կը շարունակուի :

Ա.Ր Տ Ա.Շ Ե Ս

ԱՐԱԲՈՒԱԾ Գ.

ՏԵՍԻԼ Ա.
Սւնեակ փառաւոր .

Արտաշէս , Արտաւան

ԱՐՏԱՇԵՍ

(Մոտեալ ընդ Այստաւանայ) : Ահաւասիկ ես , իմ
քաջազուն Այստաւան , հայրենին վիճակնալ
գահու՝ սկիզբն առնեմ գործոց արքունի .
այլ զիմորդ դառնութեամբ լցաւ պղտորե-
ցաւ մեզ օրս , ոչ զիտեմ , և անփորձ ճե-
ռամբ յայսոսիկ մինիլ զանգիտեմ : Այլ դու ,
երեելիդ՝ ի դրանս արքունի և հաւատա-
րիմ յիր և ՚ի բան , քաջութեամբ և ի-

մաստութեամբ ճեռն առւր ինձ , գոյնարէն
երախտեաց հօր իմոյ :

ԱՐՏԱՇԵՍ

Դառայ քո եմ , տէր արքայ . ահա ես ճգեմ
զձեռն իմ առ քեզ , և ոչ վրիզեսցի բան մի
յարքայէ :

ԱՐՏԱՇԵՍ

Երթ դու այժմ ՚ի բանտ առ Արքակ , և
տես զի՞նչ բանիք են ՚ի բերան նորա . և
փութա այսր և խորհեսցուք ՚ի վերայ նո-
րա իրաւունս :

ԱՐՏԱՇԵՍ

Ահաւասիկ ես : (Վա՛ անմտութեանդ) :
(Ելամէ) :

ՏԵՍԻԼ. Բ.

ԱՐՏԱՇԵՍ

(Խճճին). Բայքէ, զիարդ բռնացաւ՚ի վերայ
իմ սէր բարեկամին. Եթէ ոչ ակն առեալ
էր իմ երեսաց նորա, երդուեալ՚ի Միհր
աստուած, զարև նմա ոչ տայի տեսանել:

ՏԵՍԻԼ. Գ.

ԱՐՏԱՎԱՆ ԵՒ ԱՐՏԱՋԷՍ

ԱՐՏԱՎԱՆ

(Մտեա): Տէր արքայ, արքայորդին Շապուհ
և Միհրդատ կացեալ արտաքոյ՝ տագնա-
պաւ խնդրեն մոտանել:

ԱՐՏԱՇԵՍ

Մտցեն: Գիտեմ ես յորմէ Հոգւոյ շարժեալ
գան առ իս: (Եղանձ Արտաւան):

ՏԵՍԻԼ. Դ.

ԱՐՏԱՋԷՍ, Շապուհ ԵՒ ՄԻՀՐԾԱՅ

ՄԻՀՐԴԱՑ

(Մտանձ ընդ Շապիոյ, և անկանին յուս Այս-
տաւանի): Խնայեա, տէր արքայ. զթու-
թիւն:

ԵԱՊՈՒՀ

ԱՇ եղբայր. արդարութիւն վրէժինդրու-
թիւն. խնդրեմ մահ անօրինին:

ՄԻՀՐԴԱՑ

Խնդրեմ կեանս անմեղին:

ԵԱՊՈՒՀ

Ցայտնի է վնասն:

ՄԻՀՐԴԱՑ

Անցայտ է յանցաւորն:

ԵԱՊՈՒՀ

ԱՇ ամենայն ինչ դատախազէ զԱրբակայ:

ՄԻՀՐԴԱՑ

Ամենայն իրաւունք արձակեն դնա:

ԵԱՊՈՒՀ

Տարապարտ հեղումն արեան հօր մերոյ
բողոքէ:

ՄԻՀՐԴԱՑ

Արիւն որդւոյն, արիւն արքայիդ՝ որում
նա պաշտպանեաց՝ շնորհս մաղթէ:

ԵԱՊՈՒՀ

Ցիշեա, զի նեցուկ ամրութեան արքայու-
թեանս մերոյ արդարութիւնն է:

ՄԻՀՐԴԱՑ

Յուշ վեցի քեզ, տէր, զի խարիսխն է նորա
զթութիւնն:

ԵԱՊՈՒՀ

Լուր ծայնի եղբօր քո:

ՄԻՀՐԴԱՑ

Լուր, տէր, արտասուաց ծառայի քո:

ԵԱՊՈՒՀ

Ամենայն ոք մահու նորա սպասէ քաց ՚ի
Միհրդատայ:

ՄԻՀՐԴԱՑ

Տէր արքայ, զթութիւն:

ԵԱՊՈՒՀ

Եղբայր իմ, վրէժինդրութիւն: (Ազա յաս-
նեն):

ԱՐՏԱՇԵՍ

Արիք, յոտն կացէք. փոքր ինչ է տագնապ
ձեր առ իմովս: Միհրդատ յարդարու-
թիւնէ իմնէ զանգիտէ, և շապուկ՚ի զը-
թութենէս: Արտաշէս ծնունդ Քսերբսեայ՝
բարեկամ Արբակայ՝ յերկոսին միապէս
հեծէ: Ես իմնին միայնակ զերկոցուն....
(Ճեսնալ զԱրտաւան): Ե՞՛, Արտաւան, միի-
թարեա զիս. զինչ զլոյցք իցեն յԱրբա-
կայ:

ՏԵՍԻԼ. Ե.

ԱՐՏԱՎԱՆ, ԱՐՏԱՋԷՍ, ՄԻՀՐԾԱՅ,
ԵՒ ՇԱՊՈՒՀ

ԱՐՏԱՎԱՆ

(Մտեալ). Խնդրունայն զթութիւն քո. ոչինչ է

փոյթ նմա, և անցոյս գլխովին 'ի կենաց
աստի՛ և ոչ մի ինչ ողբանաց երեսս ոչ
առնէ:

ԱՐՏԱՇԵՍ

Խոկ զի՞նչ ապա. թերեւս գրգռմէլ կամի դիս
ապաշնորհն կորուսանել գնա:

ՄԵԴՐԱՑ

Կորուսանել. և գիտք. ապա 'ի սուր անկցի
անարգութեամբ որդին Արտաւանայ՝ պար-
ծանքն Արեաց, բարեկամն արքայի և մը-
տերիմ պահապան: Ուաշ անպատուղ ար-
տասուացս. ա՛հ, մի տեսցեն աչք իմ՝ զայս
ատեան փնդթութեան: Զիարդ գատեսցի
պարտաւորն 'ի հեռուստ. գատախաղք բա-
զում են, նոյն և գատաւողք, և յանցաւորն
չէ 'ի միջի. զիարդ ուղիղ ինչ խորհեսցի
կամ զատեսցի բնաւ այս ատեան: Ոչ կա-
րեմ հանդարտել. տուր ինձ, տէր, հրա-
ման, զի երթամ ածեմ այսր զԱրթակ:

ԱՐՏԱՇԵՍ

Չուր տարապարտուց յարձակեալ ես գու
յիմ վիրայ. ես զի՞ գործեցից՝ եթէ իրա-
ւունքն ոչ տան նմա արդարանալ: Աղէ,
եթէ ած այսր ըստ բանի քում զԱրթակ
(Գեայ փորով). իցէ թէ ուղիղ ինչ դատես-
ցուք յաչս քո: Հայր նորա նստցի որդուցն
դատաւոր և մի այլ ոք. թողլորիցէ, և ե-
թէ հարող ինչ իցէ՝ արձակեսցէ. ահա զա-
մենայն իշխանութիւն արքունի տուեալ 'ի
ձեռս նորա:

ԱՐՏԱՌԱՆ

Ցիմ վիրայ Հովանասցին պատուէրք ար-
քայի:

ԵԱՊՈՒՀ

Այդչափ ուրեմն յալթեաց բարեկամու-
թին՝ արդարութեան. չեն կամք արքայի
պատուհամել գնա, եթէ 'ի ձեռս հօր իւրոյ
մատնէ զնա:

ԱՐՏԱՇԵՍ

Սակայն այնպիսի հօր՝ որոյ յայտնի է հա-
ւատարմութիւն, որ ինքնին ոսոխ է որ-
դւոյն:

ԵԱՊՈՒՀ

Սակայն միշտ հայր է:

ԱՐՏԱՇԵՍ

Յայդ իսկ կրկին պարտք են նմա տանջելոյ
զրդին. ինձ անկ է միայն զվրէծ հօր մե-
րոյ լուծանել, այլ նմա միանդամայն և
զիւրոց նախատանացն և զհայրենի ամօ-
թոյն:

ԵԱՊՈՒՀ

Ապա այսպէս...

ԱՐՏԱՇԵՍ

Այսպէս եթէ վրիժապարտ է Արբակ՝ ար-
ժանի պատուհաս 'ի վերայ կապեալ և առ-
բարերարն իմ ոչ գտայց ապերախտ:

ԵԱՊՈՒՀ

Ահա գայ Արբակ:

ԱՐՏԱՇԵՍ

(Բազմի). Լուիցուք ատենին. բազմեցա-
րուք:

ՏԵՍԻԼ Զ.

Արտաշէս, Արտաւան, Միհրդատ,
Շապուհ եւ Արբակ

ՄԵԴՐԱՑ

Ահաւասիկ է Արբակ. (Մտանեն):

ԱՐԲԱԿ

Այսչափ ուրեմն ատելի եղէ Արեաց, զի 'ի
տեսիլ իմում տարապարտ մահուան գու-
մարեալ կան յայս ատեան: Տէր իմ՝ ար-
քայ...

ԱՐՏԱՇԵՍ

Զիս քեզ բարեկամ կարդա. խնայեմ 'ի
քեզ, Արբակ. և զի մի ինչ արդեօք մեղայց
սիրոյ բարեկամութեան, դատաւոր ատե-
նիս զԱրտաւան կացուցի:

ԱՐԲԱԿ

Զհայրն իմ:

ԱՐՏԱՇԵՍ

Զհայր քո:

ԱՐԲԱԿ

Ա՛հ, սիրտ իմ բեկաւ. յիմարին միտք իմ, ո

Հայր, 'ի տեսանելն զքեզ 'ի տեղովդ այդ-
միկ զիմորդ ժութեցեր լինելիմ դատաւոր.
զիմորդ և ոչ մի ինչ երկիւղ կամ գութ ան-
կաւ 'ի սիրու քո:

ԱՐՏԱԿԱՆ

Ի դատաստան եկեալ քո՝ յատենի աստ
դատաւոր նստիս. մի քններ գու այժմ
գուշակօրէն զսիրտ իմ. 'ի քումէն չարու-
թենէ եկի ես յայս ասհման. Եթէ իմոյ
խրատուն մատուցեալ էր քո զունկն, ես
այժմ ոչ նստէի աստ դատաւոր, և դու
ոչ գայլիր առ մեզ պարտաւոր:

ԱՐՏԱԿԵՍ

(Վաշ երջանիկ ծնողիդ) : (Հենգմելով):

ԵՎԳՈՒՏ

ԵՇ, ոչ եկաք այսը լսել զձեր կիրս. կամ
արդարասցի Արբակ և կամ դատապար-
տեսցի:

ԱՐԲԱԿ

Զմահ իմ խնդրես և գուն ևս, իմ Շապուհ:

ԱՐՏԱԿԱՆ

Արդ ես հարցից զքեզ, և դու տուր ինձ
պատասխանի: Դու ես Արբակ սպանող
Քսերքսեայ, ոչ դոյ քեզ պատասխանի. ա-
հաւասիկ զքէն գուշակէն յանդգնութիւն
քո և սրտմտութիւն բարկութեան...

ԱՐԲԱԿ

Սուրն, արիւնն, տեղին, ժամանակն, եր-
կիւղն և տաղնապղական փափուստ,
այս ամենայն դիտեմ եթէ զայդ գուշակէն.
սակայն յանիրաւի, ոչինչ գործեալ է իմ:

ԱՐՏԱԿԱՆ

Տուր մեզ զհաւաստիս եթէ կարես, և ցա-
ծո՛ զբարկութիւն արքայորդւոյն:

ԱՐԲԱԿ

Խնայեա, հայր, խնայեա և մի հարկաներ
զիս յոգի:

ԱՐՏԱԿԱՆ

Պարտ է քեզ կամ քերել յանձնէ զվասն,
և կամ մահու պատուհաս կրել:

ԱՐՏԱԿԵՍ

Օգնեա և դու, Արբակ, օժանդակեա մե-
րում զթութեանս:

ԱՐԲԱԿ
Տէր իմ արքայ, ուր չիք մեզ և ոչ վնաս,
զիմորդ պատուհաս. Եթէ բիւր անդամ
հարցիք զիս, զնոյն լուիջիք յինէն պա-
տասխանի.

ԱՐՏԱԿԱՆ

(Ի ծածուկ). Ո՛չ որդեակ իմ սիրելի:

ԵՎԳՈՒՏ

Թէպէտ լրեսցէ, թէպէտ խօսեսցի՞ մահա-
պարտ է այրն. զի՞ կայք անցեալ, զի՞ խոր-
հիք. զի՞ զործէ դատաւորն. (Առ Արտաշէն)
այս իցէ հայրն որ զվրէժ կրկին յանցանաց
հանդերձեալ էր ինսդրել:

ԱՐՏԱԿԱՆ

Բարկութիւն արքայորդւոյ յամօթ առնէ
զիս և վառէ զողիս: (Ախնալ զդրիչն). Արդ
ուսցին Արիք և Արտաւանայ զարդարու-
թիւն և զհաւատարմութիւն. դատապար-
տեմ ես զորդին իմ. մահապարտ է, մեռ-
ցի Արբակ:

ՄԻՀՐԴԱՏ

Բաբէ, զի՞նչ իցէ այս:

ԱՐՏԱԿԵՍ

(Առ Արտաւան). Թողէ կացցէ վայր մի դա-
տակնիքդ:

ԱՐՏԱԿԱՆ

Կնքեցաւ մուրհակաս. ես զպարտս արդա-
րութեան հատուցի:

ԱՐՏԱԿԵՍ

(Ինքին). Այ անգթութեան պարձանք:

ՄԻՀՐԴԱՏ

Այ անագորոյն անողորմ ծնող:
ԵՎԳՈՒՏ

ԱՇ, մատն լինիմ և ես յարտասուցս,

ԱՐԲԱԿ

Արտասուէ Շապուհ. Եթէ շարժեցար 'ի
գութ անողորմ բաղդիս:

ԵՎԳՈՒՏ

Ոչ ոչ, են և խնդութեան արտասուք:

ԱՐՏԱԿԱՆ

Ես մինչեւ ցարդ անաշառութեամբ դատե-

յայ, սակայն այլ ոչ ևս հանդուրժեմ. թոյլ տուք ինձ, ներեցէք ինձ հանել թափել զաղէտո ցաւոց իմոց 'ի մղձկեալ սրտէս: Ներեա ինձ, որդեակ իմ, թռղ ինձ զանգը-թութին իմ որ 'ի հարկէ. համբեր, որդեակ, և առ վայր մի, սակաւիկի ինչ առաջի կայ քեզ. մի ինչ զանգիտեր յերեսաց մահու. առաւել չար է երկեղ չարեաց:

ԱՐԲԱԿ

Աչ ես ժումէ սիրտ իմ, մվ հայր, ոչ ևս բերեմ լրել. ահաւասիկ պարտաւորեցայ յաշս աշխարհի, հատու յօս կենաց իմոց, զառաւառն իմ ինձ գիշեր եղիք, ատելի եղէ աշխարհիս Արեաց, և դու, հայր, 'ի վերայ ամենայնի այսորիկ... այ անագորյն ծնող, աւաշղ զի մեռանիմ աւասիկ: (Մկանի գեալ):

ՏԵՍԻԼ. Է.

ԱՐՏԱՉԵՍ, Շապուհ եւ ԱՐՏԱՎԱՆ

ԱՐՏԱՅԵՍ

Երթիցուք 'ի միասին, Միհրդատ. արկէք զնա գարձեալ 'ի բանտ, կացցէ մինչեւ ցերեկոյ:

ԵԱԳՈՒՀ

(Առ ԱՐՏԱՎԱՆ). ԱՇ, 'ի մեկնել յինչն Արբակայ այժմ ծանեայ եթէ զինչ իցէ մահ:

ԱՐՏԱՎԱՆ

Ահաւասիկ արեամբ որդուոյս զբոյդ շիջուցի բարկութիւն, արքայորդիկ Շապուհ:

ԵԱԳՈՒՀ

(Զայրագին). ԱՇ աղճատեալ ալեոր, այ ժանտածուտ գլուխ չարեացապարտ. 'ի բաց կաց յաշաց իմոց. խաւարեսցի քեզ լրցադ, հատցի արկէ յաշաց. գնա, անօրէն, եթի յայսմէետէ թազիր յարդանդ խաւարամունդ անգնդոց երկրի, եթէ երկիր անգամտացէ քեզ տեղի, ընկալցի զբեզ, զանօրէն զանողորմ հայրդ ծածկեսցէ:

ԱՐՏԱՎԱՆ

Այսպէս ապա իմ արդարութիւն...

ԵԱԳՈՒՀ

Կարկեաց, յամօթ լըր անօրէն, զոր արդարութիւն:

9

բութիւն ժարկիս անուանել, և սորա չափէ և սահման. և իբրեւ աւելի ինչ անդր անցանէ 'ի մոլութիւն փոխեցաւ:

ԱՐՏԱՎԱՆ

Բայց ոչ գու ինքն էիր արքայորդիկ՝ որ զիս գրգեալ հրապուրէիր մինչեւ ցայժմ:

ԵԱԳՈՒՀ

Նոյն ինքն եմնոյն ինքն, և արժանի իսկ գովութեան. և եթէ միւսոնգամ յատեան գայր Արբակ, ես դարձեալ զմահ նորա մեաէի, զմրէծ հօրն ինձ հասանէր լրընդերել. պարտ էր Արտաւանայ զորդին իւր փրկել, ինձ ատելութիւն և քեզ սէր 'ի ճահ պատահէր: ինձ չէր արժան խոնարհել 'ի գութ սիրելոյն, և քեզ չէր օրէն գատաւոր նստել արեան քո որդուոյն: Երթ ապա, երթ այսուհետև զօղեաց 'ի մայրիս, լրեա մենաւոր բունեալ 'ի խշտիս, գազան մարդարդէմ: յայսմէետէ նախանձեսցին ընդ քեզ բիւրազգի ճիւղազք Լիբիոյ, (Երանէ):

ՏԵՍԻԼ. Ը.

ԱՐՏԱՉԵՍ, Միհրդատ եւ ԱՐՏԱՎԱՆ

ԱՐՏԱՅԵՍ

(Մտեալ շնդ Միհրդատայ): Աւաշղ, զինչ անցը անցին այսօր ընդ Արբակ, Արտաւան, և հուսկ յետոյ 'ի մահ վարեցաւ:

ՄԻՀՐԴԱՏ

(Յաւագին): Անողորմ բունաւոր, այդալէս արագ փոփոխիս. զահին եղեր բարեկամին՝ և այժմ սպան:

ԱՐՏԱՅԵՍ

Ես զնա 'ի կամ հօրն ապաստան արարի, և արդ ես բունաւոր իցեմ, ես նորա գահին:

ՄԻՀՐԴԱՏ

Այդ իսկ է խորամանգ վայրենի անգթութիւն. հայրն զատաւոր՝ ծառայ էր օրինաց, այլ քեզ արքայի ծառայ են օրէնք. քեզ պարտ էր յինայել 'ի նա՛ նմա չէր օրէն. աղէ ասա, զինչ տեսեր 'ի կորուսանելն զորդին ծեռամբ հօրն, մոռացիալ զգութ և զբարեկամութիւն:

ԱՐՏԱԵՒԾ

ի՛ն, բաւ է արդ. ես բանամ զբերանս Ա-
րեաց, խօսեսցին եթէ խնայեցի ես ՚ի
գութ Արբակայ, եթէ սիրէի զնա թէ ոչ:

ԹԻՀՐԴԱՑ

Նատ է մեզ այսչափ ժամանակ խաբէու-
թեան. արդ վերացաւ առագաստն, թող
այսուհետեւ խօսեսցի (եղանք) բերանն
երկաթի:

ՏԵՍԻԼ. Թ.

ԱՐՏԱՋԷՄ Եւ ԱՐՏԱւան

ԱՐՏԱԵՒԾ

Լուա՞ր, Արտաւան, զթշնամանս և զսպա-
նալիս Միհրդատայ:

ԱՐՏԱԿԱՆ

Լուա՞ր և գու զլուտացող բանս արքայոր-
դույն:

ԱՐՏԱԵՒԾ

Գթութեամբ վարեցայ քան զարժանն, և
բռնաւոր կոչեաց զիս նա:

ԱՐՏԱԵՒԾ

Արդարութիւն գործեցի, և բարբարոս գը-
րեաց զիս նա:

ԱՐՏԱԵՒԾ

Այս իցէ ինձ ՚ի պարգև գթութեան իմայ:

ԱՐՏԱԿԱՆ

Այս փոխարէն անաշառութեանս:

ԱՐՏԱԵՒԾ

Ո՛հ, որչափ ինչ միանգամայն ՚ի միում ա-
ռուր կորուսի:

ԱՐՏԱԿԱՆ

Թող անդր ՚ի բաց զտրտունֆդ. ինձ թող
զցաւսդ, զի քան զամեննեսեան թշուառա-
ցայ:

ԱՐՏԱԵՒԾ

Մեծ են ցաւք քո, այլ ոչինչ պակաս է և
իմն: (Եղանք):

ՏԵՍԻԼ. Ժ.

ԱՐՏԱԿԱՆ

Ե՞րբ իցէ զի և ՚ի սիրտ քո հարցի միսեսցի
սուր իմ թերաքամեալ... Ո՛հ, արդ դոյզն
ինչ հանգեայ ՚ի վշտացս, արդ զիւր գտի
՚ի միայնութենէս. սիրտ իմ՝ անկաւ, յոր-
ժամ արեան որդւոյս գատաւոր նստայ.
անցցէ և այս զիննե. անցցէ և կեղակարծս
վտանգ... զի՞ բնաւ խորհիմ ես զվտանգ.
փրկեցի զսնան իմ, փրկեցից և զորդեակն
իմ:

Յորոտալ շանթել փայլականց երկնի
խուճապեալ հովիւ անկաւ ՚ի դաշտի.

Այլ ՚ի բաց մերժեալ զերկիւդ սընտակի
Ելեալ տաւալզէ զիսաշինս յարօտի:

ԱՐԱՐՈՒԽԱԾ Դ.

ՏԵՍԻԼ. Ա.

ԱՐԲԱՆ

(Միսանի). Ե՞րբ իցէ վախճան չարեացս. երբ
անկցին զինեւ մառախտուզք դժոխից. ընդէ՞ր
յասպազէ մահ. որոց միանգամ ցանկափ
և երջանկաւէտն վիճակեցան բախտի, առ
նոսա միայն յաճախէ. ՚ի դրանս իմ գե-
գերի և եթ, և ոչ մսունէ:

ՏԵՍԻԼ. Բ.

ԱՐԲԱԿ Եւ ԱՐՏԱՋԷՄ

ԱՐՏԱԵՒԾ

(Արտաքուստ). Արբակ, Արբակ:

ԱՐԲԱՆ

Ո՛վ զիք, զինչ իցէ. յայս տուն բանտի և կա-
պանաց, սգոյ և երկիւդի, ո՞զքեզ եմոյդ:

ԱՐՏԱԵՒԾ

Գիտիցես ո՞ զթութիւնն, սէր և բարեկա-
մութիւն:

ԱՐԲԱՆ

(Ճեսեալ). Այս ինչ քալուստ այսր, տէր
արքայ:

ԱՐՏԱՇԵՍ

Եկի լուծանել գքեզ:

ԱՐԲԱԿ

Լուծանել զիս:

ԱՐՏԱՇԵՍ

(Լուծանէ). Մի ևս այլ. արթ ել, աճապարեա
ընդ այս ճանապարհ որ տանի գքեզ յան-
քոյթ ինչ տեղի առ ՚ի կողաց արքունի պա-
լատանն, և փախիր տարադէմ աստի յայլ
սահման թագուորութեան, և անդ յուշ
լիցի քեզ միայն Արտաշէս, սիրեա զնա և
ողջ լեր:

ԱՐԲԱԿ

Տէր իմ արքայ, եթէ պարտաւոր դատիս
զանձն իմ, ընդէլլուծանես, իսկ եթէ ան-
պարտ ընդէր է ինձ փախչէլ:

ԱՐՏԱՇԵՍ

Եթէ պարտաւոր իցես չորհեմ քեզ զկեանս
զոր դու ինձ պարզեցեցեր. իսկ եթէ ան-
պարտ, ցուցանեմ քեզ տեղի փախստի՞ զոր
լուութեամբ և եթ կարես ունել անցանել-
ապա լուռ լիր և փախիր. խնայեա ի վիշտ
բարեկամիդ, և մի յաւելուր և զուուք քո
մահուն, և ցածր զիտովութիւն տատա-
նեալ սրտիս. ոչ զիտմ եթէ ի սիրոյ ար-
դեօք շացեալ, և կամ ի գիցն արդարա-
խնամ տեսչութինէ, ոչ ունիմ հանգիստ
մինչ արձակեցիս. ձայն լսեմ՝ ձոյն կըշ-
տամբութեան ՚ի սրտէ. եթէ յանցանքն
անյայտ, իսկ բարերարութիւնն յայտնի.

ԱՐԲԱԿ

Թոյլ տուրինձ, տէր, մեռանել. յաչս աշխար-
հի պարտաւոր դատեցայ, և ի փառս ար-
քայիր պարտ է ինձ մեռանել. ոչ մահ իմ
նախանձելի. այսուհետեւ ցնծութեամբ մե-
ռայց, զի միանգամ զկեանսն պահեցի բա-
րեկամին, և միւսանգամ զիտառս արքա-
յի:

ԱՐՏԱՇԵՍ

(Ի ծածուի). (Եւ ո՛ լոււաւ այսպիսի բանս ի
բերանոյ յանցաւորի): Աիրեցեալդ իմ Ար-
քակ, մի ընդ վայր ժամավանառ լիցուք.
շատ է ինձ ի փառս՝ ասել եթէ ի ծածուկ
պատուհանեցար. մի արտմեցուսցուք ա-
րեամբ զօրմ յորում կայ ինձ ժառանգել
զդահն հայրենի:

ԱՐԲԱԿ

Սակայն ոչ իսպառ լուեսցէ պարզէ արքայի,
և յայնժամ...

ԱՐՏԱՇԵՍ

Գնա, աղաչեմ, մի յապաղեր. և եթէ ոչինչ
զօրեն աղաչանք՝ արքայաբար տամ քեզ
հրաման:

ԱՐԲԱԿ

Անմահասցի հրամանն արքայի. կեանք իմ
փոխան կենաց արքայի. ո՛ տայր զմահ իմ
փոխանակ քո. լուփցնն արդ երկնք աղօ-
թից ծառայի քո. թագաւորեսցէ Արտա-
շէս ընդ արևու. մշտայաղթ պսակ անթա-
ռամկացցէ ի ճակատ նորա, յոստոց սար-
գենի և արմաւենի ի քառից ծագաց ձօ-
նեսցնն նմա. սասանեսցին գտիր ընդ ո-
տիք նորա, գողացցի մահ յերեսաց նո-
րա. ոսկեթել նարօս յաւերթից կենաց՝
ոսկերիմ պարիկ հիւսեսցի նմա. զիսպա-
ղութիւն զոր ես կորուսի՝ պատեսցէ զնա,
զոր ոչ ակն ունիմ գտանել զնա մինչեւ ոչ
գարձայց առ իմ հայրենիս և իմ բարեկամ
նորապասկ արքայ: Թէ աղիք ծովրւն պա-
տառեալ մոլին ընդ լետան ընդ Հովիտ,
պատին զգեստովք, պարանեն յաղիւրա՝
զուր ականակիտ, այլ միշտ մանչեն հեծեն
կարկաչեն հանգիստ ոչ ունին, մինչեւ ոչ
գարձցին ի գաւառն իւրեանց: (Եղանէ):

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐՏԱՇԵՍ

(Յնտ զնայոյ նորա). Ազատագէմ զուարթու-
թիւն երեսացն, ոչ ամբաստանէ զնմանէ
յանցանս. Հոգիք դիւցազանց ոչ ծածկին
իսպառ ընդ քողով մարմնոյն, զի նշոյք
պատին յերեսս ցուցեալ գուշակեն զնա:

Թէ ամակ ինչ փոքրիկ պատեսցէ զարփին,
Ոչ ծածկի իսպառ ըզճանանչ նորին.

Թէ յըստակ վըտակ հոսէ ընդ ծործոր,
Երեխն նըշմարիք անդընդոցն ՚ի խոր:

(Եղանէ):

ՏԵՍԻԼ. Դ.

Արտաւան եւ Մինրդատ

ԱՐՏԱՒԱՆ

(Արտարտաս)։ Արբակ, որդեակ իմ, ուր ես, Արբակ, գնենաց զծայն իմ պարտէր լսել։ Արբակ Արբակ, բարեկ. ուր արդեօր զօղեալ կայցէ. առեք գուք զզրունսն, մինչև գալց ես զորդեակն իմ։

ՄԻՀՐԴԱՏ

Մի յապաշէք, արդ ժամ էր... այլ ես ոչ տնսանեմ աստ ոչ զԱրտաւան և ոչ զԱրբակ. զի՞ եղեւ արդեօք, զի՞ գործէ. ընդէր դանդաղինք յայս գործ միծ և կարեոր. Արտաւան, քաջդ Արտաւան։

ԱՐՏԱՒԱՆ

Վայ ինձ, ոչ ուրեք գտանեմ զորդեակն իմ. ահ պատեաց զինեւ, պալին ոսկեթքս, սիրտ իմ բարբախէ և ի խէթս մտաց տագնապի. զգուզանի հարեալ կամ ամենայն անդամօքս. ա՛հ, որդեակ իմ, զի՞ եղեւ քեզ, ո՞ր արդեօք իցես։ Մի գուցէ թագուցեալ իցէ... թերեւս աստանօր... Միհրդատ։

ՄԻՀՐԴԱՏ

Արտաւան։

ԱՐՏԱՒԱՆ

Գտէր զորդեակն իմ զԱրբակ։

ՄԻՀՐԴԱՏ

Եւ ոչ առ քեզ իցէ նա։

ԱՐՏԱՒԱՆ

Եղաւէ եմ, յաճախեաց երկիւղն։

ՄԻՀՐԴԱՏ

Ազէ աստ, զի՞ եղեւ Արբակ։

ԱՐՏԱՒԱՆ

Ո՞ զիտէ, անհնարին տարակոյս անկեալ է զինեւ. միտք իմ սասանեալ չարիս գուշակնեն. ո՞ զիտէ զի՞ եղեւ նմա, ո՞ զիտէ եթէ կենդանի իցէ որդեակն իմ։

ՄԻՀՐԴԱՏ

Մի այդակն վաղվագեր ի կասկածանս. միթէ շիցեն բաւական նապուէ և Արտաշէս լուծանել զնա. ահաւամիկ է և ճանապարհըն՝ որ հանէ յարբունիս։

Այլ ընդէր էր նոցա ծածկել զայդ յինէն. ամէն, ոչ, Միհրդատ, ոչ ևս է Արբակ, սպանալ Արբակ, չէ՞ ի միջի։

ՄԻՀՐԴԱՏ

Քաւ այդ յաստուածոց. զու հանդարտ լիր, մի ինչ խոռվիր, անվրդով մտաց քեզ պէտք են ի գործդ։

ԱՐՏԱՒԱՆ

Զինչ գործ իցէ գործելոյ՝ յետ կորստեան որդւոյս։

ՄԻՀՐԴԱՏ

Զինչ իցէ այդ, զուր ուրեմն որսացաք մեք զպահապանսն և զզօրականն. պինդ կաց, խրախուսեամ. արի զնա առ արքայ, զի հանդէս է այժմ նորա թագաւորութեան. փոքր միւս ես և գնայ Արտաշէս երդմնի լինել գաշինս կոել ի վերայ տրինաց արքունի. վաղող ևս խառնեալ է իմ թոյն մահու ի բաժակն սրբութեան, և կազմ և պատրաստ ունիմ առ իս զզօրականն զալ անկանելի վերայ պալատան. միթէ ընդունայն ինչ եղիցին այսչափ քիրտն և վաստուկ։

ԱՐՏԱՒԱՆ

Ա՛հ, Միհրդատ, եթէ զորդեակն իմ ես ոչ գտանեմ, ում այլ, ոյր ազագաւ տառապիմ. ահ, օրդեակ իմ, իմ սէր Արբակ, իմ հոգւոյ հատոր. վասն քո եղէ ես սպանօղ կրիին արեան պարտաւոր. վասն քո ես ինձն զանձն իմ գարշեցուցի. և արդ կորեաւ ընդ քեզ ամենայն յայս իմ և ջան. և պաշարեցին զիս արհաւիրք մահու։

ՄԻՀՐԴԱՏ

Արբակ եթէ կենդանի և եթէ մեռեալ, նա յայսմէետէ կամ արբայսութեան կամ վրէժինդրութեան ի քէն ակն ունի։

ԱՐՏԱՒԱՆ

Այդ իսկ է միայն որ զիսն քաջալերէ. համար, Միհրդատ. ասք զիս յու և կամք իցեն քեզ. ես արդ ի քեզ եմ ապաստան։

ՄԻՀՐԴԱՏ

Մի ինչ զանգիտեր, քաջդ. ես զքնզ ի փառս ածնեմ, քաջ խրախուսեալ յոզի արքութեան, ի սիրայ որդւոյդ և արքայութեան. (Եղանէկ)։

ՏԵՍԻԼ. Ե.

Արտաւան

(Ուստի գնարդյ նորա) Յաղթեցէք, ով կիրայալ-
թեցէք, չարանախանձ թշնամիք, ինձ Ար-
տաւանայ, ովսերիմ մարտակիցք: Միայն ի
կասկածանս տարապարտ մահուան որ-
գւոյս նկուն եղեալ արութիւն սրտի՛ սըր-
տաթափուսակուրյերկիր կցեցայ ասգ-
նապեալ ի կրից աստի: Ահ, որդեակ իմ,
եթէ մեռալ մեռայց և ես, այլ արագ
արագ իջուցանեմի դժոխոս զարքայ Ար-
տաւչէն, կարապետ և հրեշտակ առաջի իմ
արձակեմ առ քեզ: և մինչչեւ առեալ քո
գոյժ քօթաբեր, գամ և ես առ քեզ, մա-
հագէմնաւաստ յալիս գժոխոց թնդապա-
սեսցէ վայրիկ մի և մեզ: Այլ զի՞նչ իցէ
ոտնաձայն: չնդիւն բազմութեան լամ
ես, ոչ է աներկիւզ վայրս: (Եղանէ):

ՏԵՍԻԼ. Զ.

Շապուհ

(Ոկտամի մտանել): Յաւէ ինձ ի վերայ քո,
սիրեցեալց իմ Արրակ: ցորչափ կենդանի
էիր՝ արեան քում ծարաւէի, և արդ ծա-
րաւիմ արտասուաց, և ոչ գտանեմ: զի՞ն
եղեւ սրտիս, ընդէմ սալացաւ քար վիմ ա-
պառած: եթէ աստ իցես արդեօք եթէ ոչ,
վրիպեցան աչք Արտաւանայ և Միհրգա-
տայ: սակայն Արգու ոնն է սէր. թող
քննեմ զննեմ, գոյցէ աչք իմ սիրելոյդ ա-
ռաւել տեսցին: Արրակ, ուր ես... եթէ
կենդանի իցես տուր ձայն: (Ունկն դնէ
լովիկ), եթէ մեռեալ էիր՝ իմ լուեալ էր.
թեթե են թեք համբաւոյն ի բօթ գուժա-
բեր: (ի լուկն զուսեաձայն): Ովես... ի բաց
կաց յինէն:

ՏԵՍԻԼ. Է.

Միհրդատ եւ Շապուհ

ՄԻՀՐԴԱՏԱՑ

(Մուսան): Զի ինդրես գու աստ:

ՇԱՊՈՒՀ

Միհրդատ, զի՞ն եղեւ Արրակ, չէ ի միջի:

ՄԻՀՐԴԱՏԱՑ

Արդ, ազէ, ուրախ լեր, մսիթարեաց, յա-
ջողեցին քեզ երկինք ի վերուստ:

ՇԱԳՈՒՀ

Զինչ, միթէ եղոյծ արքայ արձակեաց զՈւր-
բակ:

ՄԻՀՐԴԱՏԱՑ

Եւ կարի խակ քաջ, ելոյծ արձակեաց դնա
ի կենաց աստի:

ՇԱԳՈՒՀ

ՈՐԱԿԵԱ:

ՄԻՀՐԴԱՏԱՑ

Ամենեցուն յայտնի են իրբն. թէպէտ և նա
ի ծածուկ խարգաւանեցաւ:

ՇԱԳՈՒՀ

Ո՞նչ չարագուշակ բերան. այ գուժակից բար-
բառ. ո՞վ մահ անողորմ:

ՄԻՀՐԴԱՏԱՑ

Զի ընդ վայր կոճիս, այ անագորյն. ահա-
ւասիկ առեր զլրումն անզեղջ բազմա-
նացդ, շատ իցէ: յագեցար արդեօք, եթէ
այլ ևս խնդրես ճարակ, գազան մարդա-
խանճ:

ՇԱԳՈՒՀ

Ահ, Միհրդատ, ի թեթև վլտաց բարբանջէ
լիգու, սակայն ի ծանաւնց կարկեալ համ-
բանաց:

ՄԻՀՐԴԱՏԱՑ

Իմ չէր տեսեալ սիրտ անկարեկիր քան
գրոյդ. ամենայն աչք յարտասուս են, իսկ
բոյդ ոչ բնաւ:

ՇԱԳՈՒՀ

Յաւը որ արտասուողք են թեթև են:

ՄԻՀՐԴԱՏԱՑ

Հաւալա, եթէ չեւ եծ շատացար՝ Երթ առ ան-
պարտակիր մարմինն Արրակայ, որ արդ
յարիւն յապաժոյժ գիտնացեալ կայ, և
յացեսցիս ի մարմնոց նորա. հայեաց ի
կողս նորա և ի միրտ. թուեալ զիսոցուած
վիրաւոր անգամոցն, ապա թէ կարես
լրջութեամբ...

ՇԱԳՈՒՀ

Լուս լեր. ի բաց գնա յինէն:

ՄԻՀՐԴԱՏԱՑ

Լուս եղէց. ի բաց կացից ի քէն. ցորչափ

գու զօդս զայս շնչիցիս՝ զիս առ քեւ տես-
ցես. և իստանդարամետաց անդամը յարու-
ցեալ եկից ճիւղ ահարկու՛ խուճապել
զբեզ: (Ելանէ):

ՏԵՍԻՒՆ. Ը.

Շապուհ եւ ապա Արքակ

ՏԱԳՈՒՀ

Եւ ընդէր են ինձ այսչափ թշնամիք, հիմ մեծարանեալ էք ի վերա իմ և կոչչք զիս անողորմ: Շատ են ինձ ցաւք իմ և տառա-
պանք. ոչ ևս հանդարտեմ սպառնացեալ
բարկութեանն: Զի՞ գործեցի. ցաւցս կը-
ցորդակցութեամբ կարծէի թեթեանալ
յաղետից աստի, սակայն ահա հեղձա-
մբղջուկ սատակիմ:

ԱՐԲԱԿ

(Յիշուստ): Զամենայն խորչեցի, այլ և
ոչ աստ գտանեմ: Գոնեայ զրարկութիւն
արքայորդոյն կամէի ցատուցանել: տեսա-
նել զնա մանդամ և ապս մեզնել: Եթէ
գալո՞վ գայցէ այսր Շապուհ ողբալ աստ
զկապանս իմ: եթէ լուր մահուն կարաց
արդեօք մեղկել զնա... մէր իցէ: Թերես
աստ ի ներքնատունն... այլ ո՞ւր յան-
դընեալ արշաւեմ: (տեսակ զշապուհ): ա-
հաւասիկ է: ա՛հ, ոչ իշմեմ մերձենալ:

(Ցեսու ընկրիի):

ՏԱԳՈՒՀ

Աշէ, մի մոցէ որ այսր ի ներքս. (հայե-
ցեալ այսր անը): ահաւասիկ քեզ զնն,
ահա քեզ սուսեր երկասյիր, բաղուկ երե-
րեալ: դահին եղեր արեան սիրեսոյդ,
արդ տուր ի գուրս, ժայթեան մոյեզին
դոր արենք դապանաբար: Կեցից արին իմ
ընդ արեան նորա՝ ի վայրս տմբագին կա-
պանաց նորա: մեռցի անձն իմ ընդ ան-
ձին նորա: հապա (հանէ զդաշոյն) զիւրո-
վի...:

ԱՐԲԱԿ

(Դիմնալ). Անսա, ամինունա զձեռն քու:

ՏԱԳՈՒՀ

Բա՛մէ:

ԱՐԲԱԿ

Զի՞ է զի մոլեգնեալ կատաղիս ընդ անպար-
տակիր անձն քու...

ՏԱԳՈՒՀ

Անտ ես գու, Արքակ, արձակեալ ի կապա-
նաց, և տակաւին կենդանի՞ իցես գու:

ԱՐԲԱԿ

Ի պարզե բարեբար ձեռին արձակեալ ա-
պրեցայ ի կապանաց աստի:

ՏԱԳՈՒՀ

Ա՛հ, երթ ի բաց, յինէն տեղի տուր, վիշտ
վտանգիս: զի՞նչ ասասցէ եթէ որ զքեզ
ընդ իս աստ տեսցէ: թոյլ տուր ինձ, այ
ապաշնորհ, մի՞ զրկեր զիս ի փառաց աս-
տի:

ԱՐԲԱԿ

Եւ զիարդ էր ինձ, սիրելի իմ, պանդխուելի
հայրենեացս, մինչև նախ տեսեալ էր զգ-
քեզ և ողջունեալ:

ՏԱԳՈՒՀ

Յինէն զի՞ խնդրես, նենգող դաւաճան:

ԱՐԲԱԿ

Մի այդպէս, մի զայդ, Շապուհ. գիտեմ
քաջ զի սիրտ քո ոչ վկայէ լեզուիդ: յաշս
իմ խնդրես ձեւանալ: իմ իսկ առաջի ասա-
ցեր դու զայդ երբեմն:

ՏԱԳՈՒՀ

Կամ ստես կամ խարիս, և կամ ապըս-
տամը ի սրտէ խօսեցաւ լեզու:

ԱՐԲԱԿ

Եթէ ոչ կայցէ առ քեզ և կայծ մի առաջին
սիրոյդ:

ՏԱԳՈՒՀ

Նա աւանիկ բորբոքեալ իսկ է յատելու-
թիւն:

ԱՐԲԱԿ

Արդ, աղէ, յազիթ, անողոքելի գազան: ահա
քեզ երկաթ արինարբու, ահաւասիկ և
սիրտ իմ: առ միսեալ: (կարկասէ տա նա
զուր իր): հայր, մի խնայեր:

ՏԱԳՈՒՀ

Ա՛հ, ոչ, մահ այդպիսի՝ քեզ փառս ածէ, և
ոչ պատուհաս: այդմ փառաց մի յինէն
ակն կալիթ:

ԱՐԲԱԿ

Քաջ է, ապա թող ինձ քանզի մեղաց: այլ
բացուկ իմ քաւեսցէ... (իմէ զտորի ի վե-
րայ կրծոց իրոց):

ԾԱԳՈՒՀ

(Արգելու). Զի՞ գործես. կարծենս եթէ արեամբ քո միայն յագեցաց. ոչ ոչ, Կամիմ զի հրապարակաւ մահու խայտառակութեամբ զրաւեցիս ՚ի կենաց, և ոչ մի ինչ մնասցեն քեզ պարծանք քաջութեան:

ԱՐԵԱԿ

Անհամբոյր բարբարոս, մեռայց որպէս ախորժես: Ահա զառնամ միւսանգամ ի կապսն իմ: (Գենացեալ առնո զշրայս և կամի գեալ ի խորշ իր):

ԾԱԳՈՒՀ

(Վարանեալ արդա). Լուր ինձ Այբակ:

ԱՐԵԱԿ

Զի՞ն ունիցիս ասել:

ԾԱԳՈՒՀ

Երթ, փախիր աստի և ապրեսցիս:

ԱՐԵԱԿ

Ահաւասիկ և կենաց իմոց ինամ ածես, քաջէ իմ. սակայն եթէ ինձ զլասցիս զըստերմութիւնդ, մահ ինձ կենդանւոյն ի վերայ ածեր:

ԾԱԳՈՒՀ

Ի բաց կաց յաչաց իմոց. թոյլ արա ինձ աղաչեմ, թոյլ տուր ինձ զվիշտու ցաւոց իմոց. (Ելանե):

ՏԵՍԻԼ Թ.

ԱՅԲԱԿ

Ն՞րբ իցէ, ով զիք, Երբ իցէ վախճան անգթութեան ձերում: Եթէ և ի վիշտու աստոչ մեռանիմես, Երբ ապա, Երբ մեռանիցիմ:

ԱՐՄԱՌՈՒԱՆ Ե.

ՏԵՍԻԼ Ա.

Արտաշէս եւ Արտաւան

ԱՐՏԱՌԵՑ

(Երևալ լին Արտաւանայ): Այսպէս ահա, իմք քաջուն Արտաւան, թագաւորութեանս իմոց հանգերձեցաւ գահ. և արդ ժամ է կոնկ զերգում ու վատին ոյր աղագաւ. հասեալ կամբէ իներքնատոն մեկնիս, և ապա առնուլ թագ և իջանել բագմել ի գահն հայրենի: Այլ, աւանդ, զիարդէ ես անցեալ բաղմեցաց յաս աթոռ թաթաւեալ յարիւն իմ զիւցաղուն հօր և անպարտ իմ հարազատիս, մինչ չել լուծեալ իմ զիվէծ քինուն զոր անգուլ գոշմամբ բազոքն առ իս: Այն, եղբայր իմ, զի տեսի զառայց հասակդ մատնեալ յարիւն յապաժոյժ: Բաբէծ. զիարդ յափշտակեցաւ զիւցաղն ի միջոց. զիարդ անկաւ հզօրն. և ի հող մահու ծածկեցան քաջազունք: Այլ դու, հայր, որ արդ ի զիցն աղի առեալ հանգուցար, ձգեա զաջ ք հզօր և կանգնեա զգահ արբայութեանդ. հովանասցիս, տէր, քումդ ծառայի և քումդ որդւոյ՝ արի նիզակաւդ:

ԱՐՏԱՆԱՆ

Հաստ է արդ, տէր արբայ, այս դամբանական ի մահ զիւցաղին. ժամ է արդ յարուցանելց զնա ի նորին յաջորդ. Ժողովուրդ քաջարիս, գունդղ. Արեաց գումարեալ սպասեն ի սրահս տաճարիս, հանդիսադիրք քումդ զամակի, և ակն ունին մեզ թագապսակ ելանել առ նոսա: Ահաւասիկ ես փոխանակ և զկայ ժողովոյս Արեաց. կատարեա արդ, կատարեա զկամն մեր և զորինացն սահման:

ԱՐՏԱՌԵՑ

Ի ձեզ արբայ Արտաշէս՝ ի ձեզ է ապաստան. կեցցէ անձն իմ առաջի ձեր, նիզակակիցք փառաց ծնողիս: Ահա ես ծնունդ զիւցաղին նորին եմ նախանձաւոր գործոց արութեան: Ազէք զիս ՚ի ձեզ իբրև. հայր դաստիարակ և անաշառ պաշտօնեաց օրինաց արքունի, և ոչ իբրև ար-

քայ և կամբոնաւոր, իշլ ես արդ ընդգըր-
կեմ զձեզ իրրե իմ հարազատ սիրա-
մնունդ որդիս սիրելիս և ոչ եթէ ծառացս:
Խնայեմ ի ձեզ, խնայեմ յարիւն համա-
զգեաց. փառօք և պատուով պատիեցիցը ըզ-
ձեզ յասպարէղ մարտի ի վաստակ սիրոյ
ձերոց հայրենեաց. ձեր է աւար կապուտ
կողոպուտ եթէ յաղթեսնիք մրցող բանա-
կաց. և ես իրրե հովիս խնամա հսկեմ
դուարթուն ի վերայ իմոցդ խաշանց: Հո-
վանասնիք և դուք իմում պասկի. պահե-
ցէք ինձ զայ թագ և զայս գաւազան,
զայ զահ արքունի. ոչինչ այլ մաղթէ ար-
քայ Արքաշէս, զայս միսցն խնդրէ փո-
խարէն քարեաց, պյոմ ակն ունի. Զայսիմ
այսպէս հաստատեալ ուխտ երդուում ա-
ւասիկ ի լուր ականջաց ձերոց:

ԱՐՏԱԿԱՆ

(Անեալ զրաժակն տայ նմա). Ահաւասիկ
բաժակն սրբութեան. հաստատագոյն եղի-
ցի անջրելի կնիք ուխտին՝ աստածագիք
օրինօք կարգով: Առ ընկալ նուագ ոսկի,
խառնեալ յանմահից կենաց լրտացն ար-
փենի. տուր երգումն ի վեր արփաւոյն ան-
մահի. և արք զկենացս բաժակ կենդանի.
(ի ծածուկ) և արքցես զմահ:

ԱՐՏԱՇԵՍ

Լուսանեմ Արփի վեհ կենդանարար ծաղ-
կածին գալուաց,
Քե կենագործին և քե մահանան ծագք
տիեզերաց.

Աղէ, գարձ առ իս, բացցին լսելիքդ իմոց
մաղթանաց:

Եթէ լեզու իմ նենդութեամբ երդուու զայս
ուխտ օրինաց,

Նեար քո հրախազաց յանձն իմ տեղասցին՝
ոստիցին ի բաց.

Թո՞ղ թառամիսցի և բոյս դալարի՝ իմոցըն
կենաց,

Որպէս թարշամի բոցս այս ի ցողել ջրոց
կայլակաց?

Եւ բաժակըս սուրբ և անմահարար՝ զոր ինձ
ըմկել տաս,

Փոխեսցի խսպառ ի թոյն մահարար ի բունս
երակուց: (Եւ տանի ի բերանեն):

ՏԵՍԻԼ Բ.

Արտաշէս, Արտաւան եւ Արշամ

ԱՐՏԱՄ

Տէր արքայ, համ փութա առ մեզ, համ առ
մեզ, ձեռն տուրի, օգնեցէք: Շոխնդուն մեծ և
ուժգին ամբոխ ապստամբ մոլելոց շուրջ
պատեալ զդրունս ապարանից՝ ահապին
զգորդմամբ և խառնածայն աղաղակաւ ի
տէզս նիզակաց ի հուր և ի սուր խնդրեն
զանձն քո և հնարին զմահ արքայի:

ԱՐՏԱՇԵՍ

(Եղեալ զրաժակն). Ո՛Վ զիք:

ԱՐՏԱՄԱՆ

Եւ ո՞ այն իցէ անօրէնն ապստամբ:

ԱՐՏԱՇԵՍ

Աւաշ, զի անազան ծանեայ զտիրագրուժ
գաւաճանն. Արբակ է Արբակ, նենդաւոր
ապստամբն:

ԱՐՏԱՄԱՆ

Զինչ, միթէ կենդանացաւ նա վերստին ի
մահուանէ:

ԱՐՏԱՇԵՍ

Կենդանի է նա, կենդանի է ժանտն այն. ես
խոկ զնսա արձակեցի. և զի անիրաւեցայ ես
առ հայրն իմ՝ յիրաւի կրեմ զարժանին
պատուհան՝ երկնառաք ի դիցն ցասմանէ:

ԱՐՏԱՇԵՍ

Առ իմէ իցէ քեզ երկիւզգ, տէր իմ արքայ.
Միթէ ոչ շատ իցէ Արտաւան քեզ ի թի-
կունս:

ԱՐՏԱՇԵՍ

Օ՞ն, եկայք երթիցուք հանել ընդ կառավին...
(Ակասեին զեալ):

ՏԵՍԻԼ Գ.

Արտաշէս, Արտաւան եւ Շապուհ

ԵՊԱՌՈՒՀ

(Մտեալ տագեաւպա). Անսա ինձ, եղբայր իմ,
յո՞ զիմես. փարատեցաւ ամբոխն:

ԱՐՏԱՇԵՍ

Յանկարձ, Շապուհ. և զիարդ:

ԵՐԵՎԱՆ

Այն ինչ խուժան ամբոխին գրո՞շ տուեալ ի ներքս ի գաւիթ անդր փոթորկեալ զեղոցը, և Միհրդատ զօրագլուխ էր նոցա. լուեալ Արքակայ զշշուկ և զլիոթ աղա- զակին ի զէն ընթացաւ, վառեցաւ ել ար- տաքս. զի՞նչ ինչ ոչ գործեաց նա, և խոսե- ցաւ անդէն վասն արքայի՝ այն քո և իմ մտերիմ բարեկամ. Առ ի վեր գրօնն և նշաւակեաց զի՞նս անօրէնոթեան գոր- ծոյն. եցոյ և յայտնի արար զիտառ և ըդ- պատիւ տիրասէր հաւատարմութեան. զար- դիւն վաստակոց քոց և զիտառ յուշ ա- ծէր, իր զոր սաստիւ սպառնալեաց լու- ցոյց, և էր՝ զոր բանիք ողոքանօք. փոխեալ բառ ժամուն զերեսն և զմայնն. մերթ դաշն և համբոյր, մերթ ծանր և անծպիտ, և մերթ բուռն և ահաւոր. անդ ապա ա- մենէն զէնընկէց ի խախոսատ դառնա- յին. միայն յանդուն Միհրդատ նամիայն յաւակնեալ արձանացեալ կայր ի տե- ղողն. այլ նա ոչինչ յապաղեաց, կայծա- կնացաց ցոլացեալ էջ արձակեցաւ ի վե- րայ, խնդրեաց զվրէք քո, և անդէն հար սատակեաց զնա:

ԱՐՏԱԿԱՆ

(Ի ծածուկ). ԱՌ անմիտ, զաւակ անիծեալ, ԱՐԵՎԱՆԵՅ

Աստուածք ուրեմն ետուն ինձ արձակել զնա. արդ ծանեայ, արդ պատառեցաւ առագաստն. Միհրդատ է սկիզբն և ա- սանչորդ ամենայն չարեաց. յուշ եկին ինձ և սպառնալիք նորա:

ԱՐՏԱԿԱՆ

(Ի ծածուկ). Գեղեցիկ խաբեցար, ԱՐԵՎԱՆԵՅ

Այլ ուր իցէ սիրելին իմ Արքակ, իմ քաջա- զուն նահատակ. երթայր վաղվաղակի ա- ծէք զնա այսր առ իս:

ՏԵՍԽԼ Դ.

Արտաշէս, Արտաւան, Շապուհ
Եւ Արքակ

ԱՐԲԱՆ

(Մտանէ ցածորեկամք). Ահաւասիկ է Ար- քակ, տէր իմ արքայ, ահա յոտս քո խո- նարհեալ:

Մատիր առ իս, գարձիր առ իս. եկի գիրկա իմ, մտերիմ բարեկամ. իմոց թշնամիկաց հզօր ախոյեան. ընկալ զշամիոյրս սիրոյ, ներեսա ինձ, թող ինձ, եթէ երբեք յեր- կուացեալ թերացայ ինչ առ ի քէն. արդ իրեւ ջակ արփենի այնպէս ծագեցաւ ար- դարութիւն քո Աղէ, եկ խնարհեաց առ իս, և համարձակեցն զմեռն իմ կա- պէլ քեզ աներիւղ պսակ արժանի՝ փո- խան առաջին մահու և կապանաց. Ակ, բարձ զիսովին ի միջոյ զամենայն կա- կած, և լոյց զսոստի կարծիս ի մասց ա- մենեցուն: Յաղթանակեցեր իմոց թշնա- մեաց. արդ կանգնեայալ անակ անօրէնի փո- խան առաջին մահու և կապանաց. Արդ գլխովին ի միջոյ զամենայն կա- կած, ի լոյց զսոստի կարծիս ի մասց ա- մենեցուն: Յաղթանակեցեր իմոց թշնա- մեաց որ ի մեռին բում գտաւ, նոյն և զիտիսըս- տենէդ և զլութենէդ, և որինչ միանգամ գեեզ պարտաւոր յանդիմաննեցին:

ԱՐԲԱՆ

Արքայ, յաւիտեան կեաց: եթէ չնորհս ինչ փոխարէն բարեաց կամբցիս հատուցա- նել ծառայի քում, եթէ երթեք այսմ պար- գիկ գտայ արժանի, մի տագնասպիր, մի առներ ինձ բուռն. թոյլ տուր ինձ յաւեր- ժանալ ի լուսիթեան. ոչ ստեն շրթունք իմ. հաւատաւ այնմ որ ապրեցոյն զերէ, հա- ւատաւ ինձ Արքակայ, զի ես անպարտ եմ:

ԱՐԵՎԱՆԵՅ

Բարեւոք է, գոնեայ ուրեմն երդուիր մեզ զյոյշ. և երգումն ահաւոր կնքեսցէ զի- րացն ճշմարտութիւն: Ահա ամենայն ինչ ըստ օրինի պատրաստ է. ահաւասիկ և բաժակն սրբութեան. առ ընկալի ծենն, և ըստ օրինի Արքաց տուր երգումն ի վեր. կոչեա քեզ վկայ և վրէժինդիր զոմն ի վե- հից:

ԱՐԲԱՆ

Եւ առ իմէ ոչ, ահաւասիկ ես: (Ամենա նգ- րածակն):

ԱՐՏԱԿԱՆ

Զմ գործեմ ես, եթէ երդնու և ըմպէ զրա- ժակն որդեակն իմ, դեղակուր կորնչի:

ԱՐԲԱՆ

Հոր ինձ, լուսարփի, վեհըդ բուսարեր, և դաշտ ծաղկածին,

Որ կենագործես և կորուսանես զամենայն
մարմին.

Աղէ, դարձ առ իս, և քո լըսելիք ճայնիս
ձօնեսցին...

ԱՐՏԱԿԱՆ

Վայ ինձ, զի՞ գործեցից:

ԱՐԲԱԿ

Եթէ նենգաւորչըրթամբ երդնուցում զայս
ուխա օրինին,

Սա անմահարար բաժակ որրբութեան դոր
ըմպել ունիմ,

Փոխեսցի խսպառ ի թոյն մահարար աստ
յիմում ծոցին: (Տաեի ի բերանե):

ԱՐՏԱԿԱՆ

Աղէ, անսաւ ինձ վայր մի, ամփոփեա զձեռն
քո:

ԱՐԲԱԿ

Եւ ընդէր, հայր, խոշջնդոտն ինձ պատա-
հեցար. թոյլ տուր ինձ արագ արագ սրբել
յանձնէ զամենայն զկեցու անուն և զտա-
րսպարտ կասկածանս: (Տաեի ի բերանե):

ԱՐՏԱԿԱՆ

Աղէ, զի՞նչ գործեցից. յո՞ դիմեցից, (ի տանել
ի բերանե): Դարձո՞ք զձեռն քո, որդի ապլըս-
տամբ. եթէ թոյն մահու կամիցիս ըմպել,
մահ է ի բաժակու:

ԱՐՏԱՎԵԼ

Աղէ, անլուր աղէտ:

ՏԱԳՈՒՀ

(Աղջորեամբ). Բարձէ, զի՞նչ բարբառեցաւ:
(Ի բաց առնալ դեկ ի սեղանե):

ԱՐԲԱԿ

Քամ ինձ յանմահէն զմահ հաշակել:

ԱՐՏԱՎԵԼ

Խսկ ընդէր բնաւ լոեցաւ այդ յինէն մինչև
ցայժմ:

ԱՐՏԱԿԱՆ

Զի քեզ իսկ պատրաստեալ էր, զաւակ կո-
րըստեան:

ԱՐՏԱՎԵԼ

Եւ առ ինչ այդ չարարուեստ նենգութիւն
գիւաշունչ գազանութեան:

ԱՐՏԱԿԱՆ

Պատրուակել չէ հնար. մատն եղէ ի հայ-
րենի սիրոյն: Ահաւասիկ ես ինքնին խսկ
եմ սպանող Քանըսեայ. ծարաւի եմ և

քումդ արեան, զի հեղցի ի սպառ արիւն
արքոնի: Իմ է վասան և ոչ Արրակայ.
զսուրն արիւնալից ես ինքն էր որ նոու
նմա առ ի ծածկելոյ. այլագունել երեսաց
նորա յերկիւզէ արհաւրացն էր. լոռութիւն
նորա զթութիւն էր խանճակաթ որդուոյ:
Ահէ, եթէ դոյզն ինչ նուազ էր ի նմա սէր
առարինութեան, և կամ յիս հայրախնամ
գութ, արդ իմաստն զգործն տայր զիխա-
ւորել. արդ թափեալ հանեալ էր իմի քէն
ընդ կենացդ միանգամայն և զթագաւո-
րութիւնդ:

ԱՐԲԱԿ

(Գարհուրեալ). Զի՞նչ խօսի. այսահարեցար,
հայր իմ. զի՞ եղն քեզ:

ԱՐՏԱՎԵԼ

Այ ժայիրէ նենգուաւոր, այ արիւնարրու գա-
զան. սպաներ զիայրն իմ, արեան հարա-
զատիս զիս պարտաւոր եղիր: Յոր եղեռն
յանդգնեցոյ զքեզ և առեւալ տարաւ ամ-
պարիս յոյս չարանիւթ սրտիդ. մեոցիս,
անօրէն, մահու չարաւ մաշեսցիս: (Մեր-
կանայ զդաշոյնել):

ԱՐՏԱԿԱՆ

(Հանեալ զտորն). Ե՛կ, խրոխտ ապերասսան,
ե՛կ, ի միասին մեացուք:

ԱՐԾԱՐ

Ո՛վ աղետիցս. համաւ և իմ սուր մխեսցի
ի սիրտ Արտաւանայ:

ԱՐԲԱԿ

Վայ ինձ, եղուկ եմես. ահ երկինք, օգնե-
ցէք:

ԱՐՏԱԿԱՆ

Հապաւ, քաջերդ, հարցուք անիմայ. եկայք և
գուք ելէք գարանակալերդ. սատակեսցի
բռնաւորն, բարձցի ի միջոյ:

ԱՐԲԱԿ

Զի՞ գործես, ով հայր, զի՞ գործես:

ԱՐՏԱԿԱՆ

Կամիմ քաջութեամբ մեռանել:

ԱՐԲԱԿ

Դարձո՞ւ, հայր, զուրգը, ապա թէ ոչ ահա-
ւասիկ ըմպեմ ես զմահ: (Ախու դարձեալ
զրածակն):

ԱՐՏԱԿԱՆ

Անմիտ, զի՞ գործես:

ԱՐԲԱԿ

Եթէ գու հարցես զարքայ, ոչ այլ ոչ ևս
պիտոյ են ինձ այս կեանք:

ԱՐՏԱԿԱՆ

Ի բաց կաց յինէն. թոյլ տուր ինձ նահա-
տակել ի հանդէս գործոյս, զի միայն մնա-
ցի:

ԱՐԲԱԿ

Հայեաց, հայր, ըմպեմ աւասիկ: (Տաեի ի
բերանն):

ԱՐՏԱԿԱՆ

Կարճեազմեռն քո, զաւակ ապստամբ. աղէ
գու միանգամ ուշիմ լեր, Արբակ. յամօթ
արասցես զիս զհայր քո՞յ յուսակորոյս ան-
կանել ի սուր թշնամույն առ սէր հայրե-
նի... յաղթեցեր ահա, յաղթեցեր, որդի
անողորմ, զաւակ անիծեալ. ահա քեզ իմ
սուսեր. (ընկենու). առ զոր խնդրեցեր,
այլ և գու ևս ոչ ապրեցիս: (Փափյի):

ՏԵՍԻԼ Ե.

Արտաշէս, Շապուհ, Արբակ
եւ Արշամ

ԱՐՏԱՄ

Բարէ հաւատարիմ և աննենդ սրտին:
ՏԱԳՈՒՀ

Ո՛Վ նենգապատիր դաւանացն:

ԱՐՏԱԿԱՆ

Հաւակ, պնդեցայք զհետ փախստէիցն,
մի՞ ոք ապրեսցի, և Արտաւան ի մահ վա-
րեսցի: (Պնդի Արշամ):

ԱՐԲԱԿ

Վայ, նաւազ. կացէք վայր մի: Խնայեա, տէր
արքայ, խնայեա:

ԱՐՏԱԿԱՆ

Մի ակն ունիցիս վասն նորա գթութեան.
մեծ է ապիրատութիւն նորա. դու իմ ես,
Արբակ, և երկրորդ յաթոռ իմ. այլ անօ-
րինն այնմիկ չիք գթութիւն, ոչ գոյ թո-
ղութիւն:

ԱՐԲԱԿ

Ապա և զիս սպան. ոչ կամիմ զայս կեանս,
եթէ ի սէր քո զիմ հայրն կորուսից:

ԱՐՏԱԿԱՆ

Ո՛Վ մեծի առաքինութեանս:

ԱՐԲԱԿ

Ոչ խնդրեմ ի քէն գթութիւն, ոչ պազա-
տիմ թողութիւն. խստութեամբ դատնա-
ջիր. այլ փոխանակեսցի մահ ընդ մահու
նորա: Ահաւասիկ ես. (Ծունդ դնէ). ահա-
ւասիկ քո՞յ ազատարան, ահա ապրեցու-
ցիչ քո՞յ յարքայական յոտսգ անկեալ կայ,
խնդրէ ի քէն մահ փոխան հօր իւրոյ:
Այսպէս դու հաստուցես զպարտս քո ար-
դարութեան, և տացես լրումն ըլզանացդ,
արին իմ արին Արտաւանայ, հեղին փո-
խանակ արեան ծնողիս:

ԱՐՏԱԿԱՆ

(Կանգնէ զնա). Արի, յատն կաց, մի ևս այլ
կարի շատ ճմիեր զսիրտ իմ. սրբեա զե-
րեսս քո յարտասուաց այտի, դիւցազն
որդի: Ո՛Վ այն իցէ որ քեզ ընդդէմ դառ-
նայցէ: կեցցէ Արտաւան, այլ յանդարձ
օտարութիւն: Ահա ի պարգև դիւցազուն
որդւոյն ներեմ ես այսօր մեղաց ծնողին:

Հ. Արս. Կ. ԲԱԴՐԱՏՅԱՆԻ